ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 35-Ա
24 ՄԱՐՏ 2021Թ
ԱՐԳԻՇՏԻ ՆԱԶԱՐՅԱՆԻՆ ՀՀ «ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳՈՂԹԱՆԻԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ կետով, 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ և 12-րդ հոդվածի 1-ին մասերով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N319-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ «Վայոց ձորի մարզի Գողթանիկի հիմնական դպրոց հանրակրթական ուսումնական հաստատություն » պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի 2021 թվականի մարտի 23-ի N 01/26 գրությունը և Արգիշտի Նազարյանի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ

1. 2021 թվականի մարտի 25-ից Արգիշտի Նազարյանին նշանակել ՀՀ «Վայոց ձորի մարզի Գողթանիկի հիմնական դպրոց հանրակրթական ուսումնական հաստատություն » պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն, նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 / հինգ/ տարի ժամկետով:

2. Անդրանիկ Մանուկյանին ազատել տնօրենի պարտականությունների կատարումից:

3. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման ու կրթության, մշակույթի և սպորտի վարչություններին՝ օրենքով սահմանված կարգով կազմակերպել հանձնման-ընդունման աշխատանքները:

3/24/2021

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550